

ԵԳԻՊՏՈՍ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆԻ ՍԸ ԴԵՄ՝ 25 ՏԱՐՈՒՄԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԿԵՐՈՒ

Եգիպտական պետական ապահովության դատարանը 25 տարի բանտարկության դատապարտեց փախուսած իսլամական ծայրախառնական մը, որ ամբաստանում էր ռուսականի մը սպանությունը (1994) ծրագրած ըլլալու յանցանքով, յայտնեց ատենալը: Յիշեալ ատենալը, որուն վճիռները անբեկանելի են, ի բացակայութեան վճիռ արձակեց Ռիֆաաթ Ձիտանի դէմ, որ կամաա Իսլամիայի անդամ է եւ որ ըստ կարգ մը աղբիւրներու արտասահման կը գտնուի: Ատենալը հինգ տարի բանտարկութեան դատապարտեց այլ իսլամական մը, որ մեղաւորուած էր ռուսականի սպանութեան: Ատենալը անկի մեղմ վճիռ արձակած էր իշխեալ իսլամականին դէմ, որովհետեւ ան անցեալ տարի անձնատուր եղած էր իշխանութիւններուն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՆԵԿՐՈՓՈՆԹԻ ԱՅՅԵԼԵՑ ՉՕՐ. ԼԱՅՈՒՏԻ

ՖԻՆԻԼԻ ԿԵՑՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՅԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հարաւի մէջ գործող ՄԱԿի խաղաղարար ուժերու կեցութեան երկարաձգումի քննարկումի նախապատրաստութեան ծիրէն ներս ՄԱԿի մէջ Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ ճոն Նեկրոֆոնթի երէկ Դամասկոսէն ժամանեց Պէյրութ եւ տեսակցութիւններ ունեցաւ նախագահի վարչակազմի հետ: Էմիլ Լահուտի եւ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի հետ: Ան նաեւ այցելեց «Կապոյտ Գիծ» եւ ժողով մը գումարեց Ֆինիլի հրամանատարութեան հետ:

ՊԱՍՏԱՅԻ ՄԵՋ

Հանրապետութեան նախագահը ամերիկացի պաշտօնատարին փոխանցեց, որ Լիբանան կառչած է Ֆինիլի կեցութեան, մաղթելով, որ անոր կր տրամադրուի իր առաքելութիւնը կատարելու՝ թիւ 425 որոշում, գործադրելու անհրաժեշտ միջոցները: Նախագահը ըսաւ, որ կը մերժէ Ֆինիլը խաղաղարար ուժէ դէտերու խմբակի վերա-

ծելու ընտրանքը: «Հարաւի մէջ հանդարտութիւն կը տիրէ եւ Լիբանանի ամէնէն ապահով շրջաններէն մէկն է: Հաստատուեցաւ մեր այն հաւաստիքը, թէ իսրայէլեան հեռացումէն ետք շրջանին մէջ արիւնահեղութիւն եւ վրէժխնդրութեան արարք պիտի չկատարուի», ըսաւ ան: Նախագահ Լահուտ նաեւ դիտել տուաւ, որ լիբանանեան ապահովական զորամասը հարաւի մէջ իր առաքելութիւնը կը կատարէ անթերի, գործակցաբար Ֆինիլի հետ:

Չօր. Լահուտ վերահաստատեց, որ շրջանին մէջ կատարեալ կայունութիւն հաստատելու եւ արաբեկարայէլեան հակամարտութեան վերջ դնելու համար անհրաժեշտ է արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութիւն: «Լիբանան ահաբեկչութիւնը կը պանականէ բռնագրաւումին դէմ ապստամբութեանը, որ իր մերժէ Ֆինիլը խաղաղարար ուժէ դէտերու խմբակի վերա-

նախագահ Լահուտ: Հանդիպումին արժարժուեցաւ հարաւի ականապետութիւն ու շացումը, որուն պատճառն է ականներու քարտէսները յանձնելու Իսրայէլի մերժողական կեցումը: Նախագահ Լահուտ նաեւ պոռնացումը, որ պաղեստինեան շրջաններուն մէջ իսրայէլեան վարչապետութեան մագլցումը պիտի վատթարացնէ կացութիւնը եւ գալիք սերունդներն ալ պիտի պրկէ խաղաղութենէն եւ կայունութենէ: Հաղորդուեցաւ, որ Նեկրոֆոնթի յայտնած է, թէ Ուաշինկթըն համաձայն է երկարաձգելու Ֆինիլի կեցութիւնը, իսկ թիւի նուազումը կը մնայ քննարկումի նիւթ: Ան նաեւ ընդգծած է հարաւի հանդարտութեան համար իր եւ ՄԱԿի մէջ Լիբանանի ներկայացուցիչին միջեւ հաղորդակցութեան շարքը՝ էջ 10

ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆԱՊԼՈՒՄԻ ՄԵՋ ԿԱՅՐԱԳՕՐԵՆ ՍՊԱՆՆԵՑ ՉՈՐՍ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐ

Պաղեստինեան շրջաններն ու Իսրայէլ արիւնալի օր մը եւս ապրեցան երէկ, երբ երկուստեք տուին նոր պոհեր ու վիրաւորներ՝ հարուածելով խաղաղարար բոլոր ճիգերը:

Արեւմտեան Երուսաղէմի մէջ պաղեստինցի պինտալ մը կրակ բացաւ խճողւած շուկայի մը անցորդներուն վրայ՝ 15 վիրաւորներ պատճառելով: Երուսաղէմի ոստիկանապետ Միքի Լեի ըսաւ, որ առանձին պինտալ մը կրակ բացած է օթոպիւսի կայանի մը մէջ հաւաքուած հրեաներուն վրայ: Լեի անելցուց, որ պինտալը փորձած է փախուստ տալ, սակայն ոստիկանները յաջողած են պայն սպաննել: «Աքսայի նահատակներու շոկատները» շարժումը ստանձնեց Երուսաղէմի գործողութեան պատասխանատուութիւնը:



Իսրայէլացի զինուորներ կը սօճեն Այսրյորդանանի թուլքարմ քաղաքէն քաշուելէ ետք:

Յարձակումէն քանի մը ժամ առաջ ալ Համաս յայտարարած էր, որ վերատեսութեան պիտի ենթարկէ Իսրայէլի մէջ յարձակումները՝ առկա լինելու որոշումը, իբրեւ հակադարձութիւն Նապոլի ներխուժումին:

Վարչապետ Արիէ Շարոնի խորհրդատու Տորէ Կոլտ խիստ ոճով դատապարտեց յարձակումը: Կոլտ ըսաւ, որ Իսրայէլ պատշաճ ձեւով մը պիտի հակադարձէ՝ ամբաստանելով ընդունուած հարաւոր ժողովուրդին

ապահովութեան սպանացող բոլոր շարժումներն ու անոնց հետեւորդները: Կոլտ անելցուց, որ պաղեստինցիները ցարդ անփոփոխ կը պահեն իսրայէլեան Շարք՝ էջ 2

ԹՈՔԻՈՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

ԱՏՂԱՆԻՍՏԱՆ 4,5 ՄԻԼԻԱՌ ՏՈՂԱՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՒՄ ՄՏԱՑԱԻ

Աֆղանիստանի փոխանցման կառավարութիւնը ակելի քան 4,5 միլիոն տղար օժանդակութեան խոստումներ ապահոված է թոքիոյի երկօրեայ խորհրդաժողովին: Անիկա կողմ ուղղած է նուիրատուներուն, որ արագ քայլերու դիմեն իրենց բարի կամեցողութիւնը գործնական վերածելու համար:

Աֆղանիստանի ղեկավար Համիտ Քարգայ խորհրդաժողովին աւարտին յայտնած է, թէ իր նուազագոյն դահեկանն անգամ չունենցող վարչակարգը շտապօրէն օժանդակութեան կարիք ունի՝ ապահովելու համար, որ իրեն հանդէպ տանջուող աֆղաններու վստահութիւնը չկորսնցնէ:

Նուիրատուները շեշտած են, թէ ֆոնտերու հոսքը կախեալ է անկէ, թէ Քարգայի մէկ ամսուան վարչակարգը պիտի կարենա՞ր ժողովրդավար ընկերութիւն մը ստեղծել եւ կանխարգիլել, որ փտածութիւնը գումարները սխալ ձեռքբերու հասնէ:

Խոստացուած օժանդակութեան ակելի քան 1,8 միլիոն տղարը պիտի յատկացուի առաջին տարուան ընթացքին: Ըստ Համաշխարհային Դրամատան եւ ՄԱԿի գնահատումներուն, 15 միլիոն տղար անհրաժեշտ պիտի ըլլայ յառաջիկայ տասնամեակին՝

Աֆղանիստանի վերակառուցման համար: Նուիրատուները ընդունած են, թէ դրամը պէտք է արագօրէն զրկուի ալլապէս վերակառուցման ամբողջ գործընթացը կրնայ վտանգուիլ:

Մինչ այդ, Նիւ Եորքի ՄԱԿի կեդրոնին մէջ, մասնագէտներու յանձնախումբ մը երկուշաբթի օր յայտնած է, թէ Աֆղանիստանի մէջ խաղաղութիւնն ու ապահովութիւնը կրնան վտանգուիլ ըլլալ, որովհետեւ թալեպան եւ «Քայիտա» զինեալներ կրնան տակառուցման ամբողջ գործընթացը կրնայ վտանգուիլ:

Մասնագէտները ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին թելադրած են ամբողջ երկրին դէմ գէնջերու ամպարկօ մը հաս-

Շարք՝ էջ 10

«ԱՐԱՐԱՏ» ՖԻԼՄԻՆ ՀԱԿԱԴԱՐՁԵԼՈՒ ԹՐՔԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Թուրքիոյ վարչապետի օգնական Տեվիթ Պաչչելիի գլխաւորութեամբ երէկ Անգարայի մէջ իր հերթական նիստը գումարեց Թուրքիոյ ապգային անվտանգութեան խորհուրդի հովանաւորութեամբ գործող «Յեղասպանութեան անհիմն պնդումներու դէմ պայքարի համակարգումի խորհուրդը»: Նիստին գլխաւոր օրակարգն էր մօտ օրէն հրապարակուելիք «Արարատ» ֆիլմին դէմ միջոցառումներու ձեռնարկելու միջոցներու որոնումը:

Թրքական «Հիւրիէթ» թերթին համաձայն, նիստի ընթացքին որոշուած է համակարգել Թուրքիոյ կրթութեան եւ արտաքին գործոց նախարարութիւններու, ինչպէս նաեւ կառավարութեան եւ քաղաքացիական կապակերպութիւններու քայլերը «Արարատ» ֆիլմին հակադէյու համար: Նիստին մասնակցած են Թուրքիոյ ապգային անվտանգութեան խորհուրդի ընդհանուր քարտուղարը, ներքին, արտաքին եւ ապգային անվտանգութեան նախարարութիւններու խորհրդականներ եւ այլ պաշտօնատարներ:

«Արարատ» ֆիլմին բեմադրիչն է քանասահայ Աղոմ Էկոյեան: Ֆիլմին առանցքը կը կապուի Հայկական Յեղասպանութիւնը: Ժապաւեհնի նկարահանման օժանդակած են «Միւրամաք» եւ «Ուրլո Տիպի» ընկերութիւնները:

ԱԼԻԵԻ ՓՈՒԹԻՆԻ ՀԵՏ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿԵ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ

Ալրպէյճանի նախագահ Հայտար Ալիե վաղը՝ Հինգշաբթի պիտի մեկնի Ռուսիա, պաշտօնական այցելութեան մը համար:

Ալրպէյճանի մէջ Ռուսիոյ դեսպան Նիքոլայ Ռիպալով, անդրադառնալով Ալիեի այցելութեան, յայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման առնչուող հարցեր լուրջ քննարկումի պիտի ենթարկուին Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ Ալիեի հանդիպումին ընթացքին:

Ռիպալով յայտնեց, որ Ռուսիա չի հեռանար այս տագնապին լուծումէն, եւ թէ առաւելագոյն չափով պիտի օժանդակէ, որպէսզի թող չտայ ռազմական բախում մը: Միաժամանակ դեսպանը ըսաւ, որ Վլատիմիր Փութին եւ Հայտար Ալիե եւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման առնչութեամբ պիտի չկատարեն հրապարակային յայտարարութիւններ, «որոնք կրնան ճիշդ

Շարք՝ էջ 10

ՄՕՏ ՕՐԵՆ

ՀԱՅՐԵՆԻ ՉԱՒԱԽՔ

«Ազգակ» յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

Հ. Յ. Դ. ԼԻԲ.Ի ԿԵԳՐ. ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԴԵՍՊՈՒՆԻՆ

Երէկ, առաւօտեան ժամը 10:00ին, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւնը մը այցելեց Լիբանանի մէջ Չուիցեթիոյ դեսպան Եորկ Շթրոյիի: Հանդիպման ներկայ գտնուեցաւ նաեւ դեսպանատան քարտուղարը:

Պատուիրակութիւնը իր երախտագիտական խօսքը փոխանցեց դեսպանին ձեռքով ժրնէի Քանթոնի կառավարութեան, այս վերջինին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման քանադէպի որդեգրման առիթով, ան միաժամանակ, շեշտեց այս աշխատանքի ծաւալման եւ Չուիցեթիոյ Դաշնակցային խորհրդարանի կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութիւնը:

Հանդիպման ընթացքին արժարժուեցան Հայաստանի եւ Արցախի քաղաքական ու տնտեսական վերջին պարագայութիւնը: Պատուիրակութիւնը ընդգծեց Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ Արցախեան հակամարտութեան խաղաղ լուծման անհրաժեշտութիւնը, իբրեւ շրջանի կայունութեան հիմնական երաշխիք:

Դեսպանը հաստատեց, որ Հայկական Յեղասպանութեան ճանաչման իմաստով այլ նախաձեռնութիւններ պիտի կատարուին: Ան ըսաւ, թէ ամէն պետութիւն պէտք է քաշուի իր նկատման իր անցեալը վերանայելու եւ քննելու:

Պատուիրակութիւնը դեսպանին յանձնեց Հայկական Յեղասպանութեան մասին վաւերացումներու հրատարակութիւններ: Դեսպանը յայտնեց, որ շարքակալ հերթականութեամբ Յեղասպանութեան իրողութիւնը ժխտող հրատարակութիւններ կը ստանայ:

Դեսպանը ըսաւ, որ Հայկական Յեղասպանութեան ճանաչման ի խնդիր տարրուող աշխատանքին յաւելեալ թափ պէտք է տրուի հայերու թէ օտարներու կողմէ, տրուած ըլլալով, որ 1915ի ողբերգութիւնը զուտ հայկական հարց չէ, այլ համամարդկային բնոյթ ունի:

ՎԱՐՉԱՊԵՏ Ռ. ԶԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ



Հայաստանի դեսպանը վարչապետ Հարիրիի մօտ:

Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան երկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Վերադառնալով Զեյտուն դրուեցաւ հայելիբանանեան տնտեսական յարաբերութիւններու վարձագուման անհրաժեշտութեան վրայ, նշելով ներկայ մակարդակի անհամապատասխան ըլլալը առկա ներուժին: Յատուկ ուշադրութեան արժանացան հայելիբանանեան տնտեսական ծրագիրներու մշակման եւ իրականացման կարելիութիւնները:

Դեսպան Ա. Յովհաննիսեան վարչապետ Ռ. Հարիրիի փոխանցեց Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի ողջոյնները:

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՌՈՐՆԵՐՈՒ ՍԵՆՏԻՔԱՆԵՐՈՒ ՀԱՄԱԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՈՎ

ԲԱՑ ԳՈՐԾԱԴՈՒՄ

Պետութեան վարչութիւններու եւ անկախ հաստատութիւններու աշխատատեղերու սենտիքներու համադաշնակցութիւնը յայտարարեց, որ այսօր՝ Չորեքշաբթի, կը սկսի բաց գործադուլի մը, որ պիտի շարունակուի, մինչեւ որ ընթացք տրուի իր պահանջներուն: Որոշումը գործադրել յանձն առաւ ելեկտրականութեան ընկերութեան աշխատատեղերու սենտիքան, պահանջելով ելեկտրականութեան մարզի վերականգնման օրէնքի որոշումներին առեւն հաշտուի, առնել աշխատաւորներու շահերը, դրամական հատուցում տալ ելեկտրականութեան յատուկ սակի փոխարէն, օրական 6000 լ. ոսկիի փոխադրածախս տալ 1/1/2002էն սկսեալ, պետական միւս պաշտօնեաներուն պէս եւ վարել 1999ի եւ 2000ի յաւելեալ աշխատանքի վարձատրութիւնը:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ծաբէ Սաղորճեան Տէր եւ տիկին Րաֆֆի Սաղորճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սարգիս Քորեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Րաֆֆի Չոփուրեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Զարեհ Մարտիրոսեան Տէր եւ տիկին Յակոբ Սաղորճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Զարեհ Սաղորճեան եւ զաւակունք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր եւ հարազատին:

ՅՈՎՀԱՆՆԵՍ (ՀԱՆՆԱ) ՍԱՐՏՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 21 Յունուարին, Մոնթէպի մէջ:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Մարտիկ եւ Ալիս Պողոսեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Կարօ եւ Նորա Հէթիմեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Մանօ եւ Ալիս Պողոսեան Պողոսեան ընտանիք Միքայէլեան ընտանիք Էլմաճեան ընտանիք Գրճիքեան ընտանիք Սողոմոնեան ընտանիք Թիւթեան ընտանիք Հէթիմեան ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին:

ՍՐԲՈՒՇԻ ՊՕՂՈՍԵԱՆԻ (ՏԾՆԵԱՂ՝ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 21 Յունուար 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան, Սիւնի, Աւստրալիա:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին Մարտիկ Պողոսեանի բնակարանը, Չալքա, Հարպոյեան շէնք, bloc D, Չորեքշաբթի 23 եւ Հինգշաբթի 24 Յունուարին:

ՊԸՐԻ ՄՏԱՎԱԽՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի երկ երեսփոխանները հրաւիրեց Յունուար 28էն սկսեալ գումարելու 2002 տարւան պետական պիւտճէի նախագիծի քննարկումին եւ վաւերացումին նուիրած լիազուարթ ժողովներ:

ՎԱՐՑԱՂՈՅ

Խորհրդարանի նախագահը երկ «Ռոյթթրոյ» լրատու գործակալութեան տրուած

հարցալրոյցի մը մէջ մտաւայնութիւն յայտնեց, որ Պէյրութի մէջ գումարելու իր արարական վեհաժողովի որոշումները «տկար» ըլլան եւ պաղեստինեան ինթիֆատային նեցուկ կանգնող կեցածք չորդեգրուի:

ՆԱԽԱՆՅԵԱՂ ՎԻՇԵՐ

Նախանցեալ գիշեր, խորհրդարանի նախագահը այցելեց Հրապարակի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլայի հարաւային արուարձանին մէջ բնակարանին:

Ընթրիքի սեղանին շուրջ կայացած հանդիպումին ներկայ գտնուեցան երեսփոխաններ Այյուպ Հըմալի Եւ Ալի Հասան Խալիլ՝ Ամալէն, եւ Իպրահիմ Ամին Սայիտ եւ Հիւսէյն Խալիլ՝ Հրապարակէն:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ...

Իսրայէլեան ուժեր չորս պաղեստինցիներ սպաննեցին երկ Նապուսի մէջ, որ ներխուժած էին առաւօտեան կանուխ ժամերուն՝ ծայրայեղականներ ձերբակալելու արշաւին ծիրէն ներս: Չինուորները պաշարեցին շէնք մը, որ բոս բանակին ապաստանած էին ծայրայեղականներ: Բանակին յայտնեց, որ բախում ունեցած է Համասի կիսապետներուն հետ, որոնցմէ չորս հոգի սպաննած է:

365 ՕՐԵՐԸ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան մէկ օրուան ճաշի ծախսը՝ 300 տոլար:

ՔԱՂԱՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Քաղաքի Ժողովուրդի Կարգապահ Սիւր՝ TVA (ՅԱԲԷԼԵԱՆ ԱՐԺԷԻ ՏՈՒՐԸ) Կը գեկուցէ՝ ՊՐՆ. ՅԱԿՈՒ ԱՐՔԱՀԱՄԵԱՆ (Երդուեալ հաշուեքննիչ) Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 25 Յունուար 2002, երկուշաբթի ժամը ճիշդ 8:00ին, Նշան Փալանճեան ճեմարանի «Վասպուրական» սրահէն ներս:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԹՈՐՈՍ ԱՌԱՍԻՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱՎԱԴԵՍԻԱ

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՆԳԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՈՅ ՍԿԱՆԱԿ ԵՒ ՍԻՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍԱՍԵՐՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ Այլատանոցի առաջին հանդիպումը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 4 Փետրուար 2002ին, Նշան Փալանճեան ճեմարանի մէջ, Չորաք Էլ Պլաթ: Մանրամասնութեան համար հեռաձայնէլ թորոս Ռուլին Կերպարուեստի Ակադեմիա, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3:00էն 6:00, իսկ Չարաք օրերը ժամը 11:00էն 4:00, հետեւեալ թիւերուն՝ 01-265899 եւ 01-249375:

ԾԱՍՕԹ. Կառատունը ապահովուած: Թ. ԱՌԱՍԻՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱՎԱԴԵՍԻԱ

ՔԱԶԱՅԻ ԶԸՆԴՈՒՆԵՑ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ

Լիպիոյ ղեկավար Մուամմար Քալաֆի երկ պալմայր ըլլալուն պատճառով չկրցաւ ընդունիլ Լիբանանի նախագահ Վո. Էմիլ Լահուտի պատուիրակ, կրթութեան նախարար Ապտէլ Ռահիմ Մրատը, որ Պէյրութի մէջ Մարտի վերջերուն գումարուելիք արաբական վեհաժողովին ներկայ գտնուելու նախագահ Լահուտեան Քալաֆիի յղուած հրաւեր - նամակը յանձնեց Լիպիոյ Ափրիկեան Միութեան հարցերու նախարար Ապտէլ Սալամ Թուրայքիի:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԴԵՄ. ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐՆԵՐ

Դրամական հարցերու ընդհանուր դատախայ Սալիլ Ռահալ երկ ամբաստանագիրներ արձակեց ելեկտրականութեան ընկերութեան քառասուն պաշտօնեաներու եւ պատասխանատուներու դէմ, որոնցմէ ութը արգելափակուած են, իսկ միւսները ազատ մնացին կեցութեան վայրի երաշխատրութեամբ:

Ամբաստանեալները կը մեղադրուին պետական գումարներու հետ առնչուող սխալ տնօրինումով անոնց միտումին, օրինակագրութեան եւ կանոններու խախտումի եւ պարտականութեան մէջ թերացումի յանցանքներով: Քրեական օրէնքի հիմամբ մինչեւ երեք տարւան բանտարկութեան նախատեսող այս ամբաստանագիրները Ռահալ փոխանցեց Պէյրութի աւագ քննիչ դատախայ Հաթէմ Մատիի:

ՏՈՒՐԻՍՏ. ՔԱՐԱՔԻ ԹԵԿՆԱԾՈՒՄ Ը. Ա. Ա. ՄԵՏՈՒԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆԻ ՊԱՇՏՈՆԻՆ

Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի ընդհանուր տնօրէնի պաշտօնին համար նախարարաց խորհուրդի յառաջիկայ նիստին պիտի ներկայացուի տոքթ. Մոհամէտ Քալաֆի:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սառա Ալեքսանեան եւ դուստրը՝ Ժաքլին Տէր եւ տիկին Միւսա Ալեքսանեան եւ զաւակունք Աղաճեան ընտանիք Տէր եւ տիկին Մորիս Ծապուրեան եւ զաւակունք Տիկին Պերճուհի Բարսեղեան եւ զաւակը Տէր եւ տիկին Յարութիւն Զիննէթեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ատուր Ուրֆայեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յակոբ Արաքաճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սարգիս Թոփալեան եւ զաւակունք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոջ եւ հարազատին:

ՊԵՏՐՈՍ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻ (ՏԾՆԵԱՂ՝ ԱՂԱԽՍԹԱՆ, 1920ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 22 Յունուար 2002, առաւօտեան ժամը 10:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 23 Յունուար 2002, Նոր Մարաշի Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ Աւետարանական գերեզմանատունը: ●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ամանոս թաղ, Թորոսեան վարժարանի կից, Չորեքշաբթի 23, Հինգշաբթի 24 եւ Ուրբաթ 25 Յունուարին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Վարազդատ Գարակէօզեան եւ զաւակունք Տիար Վարդգէս Գարակէօզեան Օրիորդ Արաքի Գարակէօզեան կը գուժեն իրենց մօր: ԱՐՇԱԼՈՅ ՎԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ 13 Յունուար 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 24 Յունուար 2002ին Ալֆորփիլի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցիին մէջ, Յրանսա: Հասցէ: araxifr@yahoo.com 1 place du petit pont, 94140-ALFORTVILLE-FRANCE

ՄԱԿԻ ՄԵՋ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՄՊԱՆԸ ՍՈՒՐԻԱ Կ'ԱՅՅԵԼԷ



Նեկրոփոնթի Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհի հետ քննարկեց Միացեալ Նահանգներու կողմէ ղեկավարուած հակահարձակութեան արշաւը:

ՄԱԿԻ մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը Երկուշաբթի օր հանդիպումներ ունեցաւ սուրիացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ: Սուրիա ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի նորագոյն անդամներէն մէկն է: Արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհի հետ ունեցած տեսակցութեան արարտին, ձոն Նեկրոփոնթի ըսաւ, որ այս այցելութեան ընթացքին Նեկրոփոնթի ըսաւ, որ այս այցելութեան ընթացքին Նեկրոփոնթի շեշտեց, որ երկկողմանի կապերու գծով որեւէ նիւթ չէ արժարժուած: Ան աւելցուց, որ խօսած է Ապահովութեան Խորհուրդի օրակարգին վրայ գտնուող հարցերու մասին, ինչպէս ահաբեկչութիւնը, Աֆղանիստանը, Միջին Արեւելքը եւ այլ հարցեր:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌՈՒ ԱՆԿԱՍՏ ՄԻԱԿ ԿԱՅԱՆԸ ՓԱԿՈՒԵՅԱՒ

ՄՈՍԿՈՒՎ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիա Երեքշաբթի օր փակած է երկրին պատկերասփիւռի անկախ միակ կայանը, կրեմլինի տալով սփռումներու մենաշնորհ՝ խորհրդային ժամանակաշրջանէն ի վեր առաջին անգամ ըլլալով: Մոսկուա յայտնած է, թէ «Թի. Վի. 6» կայանին ձակարակները կուտ առնուող արկանները հարց է, սակայն անիկա մտահոգութեանց դուր բացած է ինչ՞իք վերաբերի ատեններու անկախութեան: Ուաշինկթըն յայտնած է, թէ կը թուի, որ ատենները քաղաքական հրահանգներու հիմամբ գործած են: Կայանին ընդհանուր տնօրէնը՝ Եւգենի Քիւրիլով, յայտնած է, որ կէս գիշերին կայանին մէկ յայտագիրը ընդհատուած է, սթիւտիոյին մէջ էլեկտրամիկան հոսանքը, ինչպէս նաեւ հեռաձայնային եւ համացանցի կապերը կտրուած են: Փակելով «Թի. Վի. 6» կայանը, որուն անձնակազմին մեծ մասը «Էն. Թի. Վի.»-ի նախկին պաշտօնեաներ են, իշխանութիւնները լռեցուցած են իմբակ մը, որ յանդիմաններ կ'ունենան քննադատելու Չեչենիոյ մէջ զինուորական մարտավարութիւնները եւ Կրեմլինի մէջ փտածութեան ենթադրեալ գայթակղութիւնները քողարկելու: Աջակողմեան Ուժերու Միութեան կուսակցութեան ղեկավար Պորիս Նեմցով յայտնած է, թէ նախագահին կողմէ «ասիկա քաղաքական շատ մեծ սխալ մըն է»: Ան յոյս յայտնած է, որ «ուշ կամ կանուխ մէկը ատիկա պիտի բացատրէ անոր կամ ինք պիտի անդրադառնայ անոր»:

ԹՈՒՐԸԻԱ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵԻՒ ԲԱՆՈՒՄՆԵՐ

ՏԻՍՐՊԵՔԻՐ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ հարաւարեւելեան շրջանին մէջ երկու ոստիկաններ վիրաւորուած են իսլամական ծայրայեղականներու հետ տեղի ունեցած բախումներու ընթացքին, մինչ իշխանութիւնները թափ կուտան իրենց ձեռքերուն՝ ապօրինի ճրագողի խմբակը սանձելու համար, յայտնած են պաշտօնատարներ Երեքշաբթի օր: Հարաւարեւելեան Պաթման քաղաքին մէջ ոստիկանութիւնը Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերուն 9 կասկածելիներ ձերբակալած է՝ ՀՔԿ-պողոյսի ենթադրեալ անդամներու հետ բախումներէ ետք: Շրջանին մէջ ապահովութեան միջոցառումները թափ ստացած են ՀՔԿ-պողոյսի դէմ քայլերու դիմած տեղացի ոստիկանապետի մը սպանութեան մէկ տարուան տարեդարձին նախօրեակին: Ոստիկանութիւնը այս ամիս աւելի քան 50 կասկածելիներ ձերբակալած է, պատճառը ամբաստանելով իմբակին համար անդամներ ապահովելու յանցանքով: Իշխանութիւնները իմբակը պատասխանատու կը նկատեն աւելի քան 150 սպանութիւններու համար:

ԱԶԻՋ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐՈՒ ՕԴԱՆԱԲԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

Իրաքի փոխ վարչապետ Թարէք Ալիյ զ ա տ ա պ ա ր տ ե ց արեւմտեան դաշնակից ուժերու օդանւային յարձակումը իրաքեան օդուժին հակաօդանւային հրթիռներու մէկ կեդրոնին վրայ: Ալիյ ըսաւ, որ ամերիկեան օդանւայերը անգամ մը եւս խախտեցին Իրաքի օդային սահմանները՝ յարձակում գործելով հարաւային «արգիլեալ գոտի»-ին վրայ: Ալիյ աւելցուց, որ երբ ամերիկեան օդանւայերը իրաքեան հոդերը ուժեղացան, Իրաք իրաւունք կ'ունենայ պաշտպանելու իր գերիշխանութիւնը: Ալիյ անընդունելի նկատեց այն յայտարարութիւնները, ըստ որոնց, Իրաք սպանալիք է Ամերիկայի: «Այսպիսի յայտարարութիւններ կ'աղաւաղեն ճշմարտութիւնը», շեշտեց Ալիյ: Ալիյ կը խօսէր Դամասկոսի մէջ, ուր ժամանած էր, տեսակցութիւններ ունենալու համար սուրիացի պաշտօնատարներու հետ՝ Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցներուն մասին: Օոցի մէջ գտնուող ամերիկեան ուժերուն հրամանատար Ռոթըրթը իրաւունք ունի զնաշնակից ուժերու օդանւայերը Կիրակի օր թիրախներ ուժեղացնելու հարաւային շրջանին մէջ: Բանքերը աւելցուց, որ ուժեղացնելու ինքնապաշտպանութիւն էր իրաքեան թշնամական

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԷՅՃԻՆԿԻ ՄԷՋ՝ ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՑՈՅՑ

ՊԷՅՃԻՆԿ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Չինացի հաւարարու պաշտօնեաներ չենանի մէջ ցուցեր կատարեցին՝ բողոքելով կառավարութեան շնորհած ոչ բարար աշխատավարձերուն դէմ, յայտնեց Չինաստանի Աշխատատեղերու Հակադրութեան Ամերիկեան կեդրոնը, Երեքշաբթի օր: «Աւելի քան 2000 աշխատողներ փակեցին փողոցները մայրաքաղաքին մէջ ստեղծելով անտանելի խռովում մը», աւելցուց կեդրոնը: Հենան նահանգի ոստիկանութիւնը հերքեց, թէ նման ցուցեր տեղի ունեցած են: Սակայն ամերիկեան կեդրոնը ընդգրծեց, որ այդ ցուցերը տեղի ունեցած են եւ ցուցարարները կառավարութիւնը ամբաստանած են՝ ըսելով, թէ պետական պաշտօնեաներուն աշխատավարձերը յաւելումներ կ'արձանագրեն, իսկ սովորական աշխատողներուն պահանջները կ'անտեսուին:

ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ

ՄԱՆ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Տասնեակներով դիմակաւոր ցուցարարներ Երեքշաբթի օր յարձակում գործեցին ոստիկանատան մը վրայ, Յորդանանի հարաւային շրջանի Մասնաքաղաքին մէջ, իբրեւ բողոք պատանիի մը սպանութեան դէմ, յայտնեցին ականատեսներ: Ականատեսները ըսին, որ ոստիկանութիւնը արցունքաբեր ումբեր արձակեց ցուցարարներու համար ցուցարարները, որոնք կը մասնակցէին 15ամեայ Սիւլէյման Ամէտ Ֆանաթի յուղարկարութեան: Ցուցարարները, որոնք ծածկած էին իրենց երեսներն ու գլուխները, յարձակեցան մօտակայ ոստիկանութեան վրայ՝ փամփուշտներ արձակելով շէնքին ու ոստիկանութեան ինքնաշարժներուն վրայ: Անոնք նաեւ իրկիւցեցին ոստիկանատունը: Քաղաքին մէջ տիրեց լարուած մթնոլորտ մը. վաճառատուներն ու դպրոցները փակուեցան: Մասնի բնակիչներ յայտնեցին, որ խռովութիւնները ծայր տուին, երբ դիպչանութեան արդիւնքները ցուց տուած են, թէ Ֆանաթի մահացած է, որովհետեւ ծեծի ենթարկուած է եւ երկամները դադարեց են գործել: Ֆանաթի ձերբակալուած էր գողութեան մը համար եւ կը հարցաքննուէր ոստիկանութեան կողմէ: Ոստիկանութիւնը հերքեց, որ բիրտ միջոցներ օգտագործած է պատանիին դէմ: Խռովութիւնները, որոնք ծայր տուած էին Երկուշաբթի գիշեր, կանգ առին, երբ քաղաքին քաղաքական ու կրօնական անձնատրութիւնները միջամտեցին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՎՐԱՅ՝ ՁԻՆԵԱԼ ՅԱՐՁԱԿՈՒՄ



Հնդկ զինուորներ կը հսկեն Հնդկաստան-Փաքիստան սահմանի երկայնքին:

Հարաւային Ասիոյ մէջ կացութիւնը յաւելալ լարուածութիւն արձանագրեց երէկ, երբ զինեալներ յարձակում գործեցին Հնդկաստանի Կալկաթա քաղաքին ամերիկեան մշակութային կեդրոնին վրայ, սպաննելով չորս ոստիկաններ եւ վիրաւորելով քանի մը ուրիշներ: Հնդկաստան անուղղակի կերպով ամբաստանեց Փաքիստանի՝ սրելով լարուածութիւնը երկու դրացիներուն միջեւ, որոնք գրեթէ ամիս մը ի վեր պատերազմելու պատրաստ վիճակին մէջ կը գտնուին: Ներքին գործոց նախարար Լալ Քրիշնա Ստուանի ըսաւ, որ Կալկաթայի ամերիկեան մշակութային կեդրոնին շուրջ գտնուող ոստիկաններուն վրայ կրակ բացող զինեալները կրնան անուղղակի կերպով կապեր ունենալ Փաքիստանի գաղտնի սպասարկութեանց հետ: Ատուանի ահաբեկչական արարք որակեց Կալկաթայի յարձակումը: Փաքիստան շուտով հակադարձեց՝ հերքելով ամբաստանութիւնը եւ շեշտելով, որ Իսլամապառի գաղտնի սպասարկութիւնները որեւէ ձեռքով առնչակից չեն գործողութեան: Արտաքին գործոց նախարարութեան բանբերը ըսաւ, որ Փաքիստան վերստին կը հաստատէ, թէ կը դատապարտէ ահաբեկչութիւնը իր բոլոր ձեռներուն մէջ: Գործողութիւնը տեղի ունեցաւ առտուան կանուխ ժամերուն, երբ մոթոսիքիներով զինեալներ գնդացիներով փամփուշտներու տարափի մը տակ առին խումբ մը ոստիկաններ, որոնք կը հսկէին ամերիկեան կեդրոնին շուրջ: Ոստիկանութիւնը յայտնեց, որ չորս պոհեր արձանագրուած են, սակայն ամերիկեան դեսպանատան բանբեր մը ըսաւ, որ հինգերորդ ոստիկան մըն ալ սպանուած է: Ձինեալները յաջողած են փախուստ տալ: Ատուանի իր յայտարարութեան մէջ ըսաւ, որ շարժում մը ստանձնած է յարձակումին պատասխանատուութիւնը: Սակայն ան չտուաւ շարժումին անունը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԵՐՐՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ Կ'ԱՇԽԱՏԻ ԿԵՐԱՑՆԵԼ ՄԱՀԱՊԱՏԻԺԸ ԵՐՐՈՂԱՅԻ ՏԱՐԱԾՔԻՆ

ՍԹՐԱՉՊՈՒՐԿ, 22 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- Երոպական խորհուրդը նպատակադրած է Երոպայի տարածքին ջնջել մահապատիժը: Արդէն իսկ տարիներէ ի վեր այս պատժամիջոցը չի գործադրուիր Եւրոխորհուրդի անդամ 43 երկիրներու մէջ, բայցմասնաւոր Երրորդ խորհուրդը բարարար չի համարէր մարդկային իրաւանց հարցերու հետ առնչուած համաձայնութեան ճրգ կէտը, ուր յիշուած է, թէ մահապատիժը կ'արգիլուի միայն խաղաղ կացութեան ժամանակ: Երոպական խորհուրդը կը տեսնէ նաեւ, որ նոյնիսկ այդ բացառութիւնը պէտք է ջնջուի: Երկուշաբթի երեկոյեան կայացած Երոպական խորհուրդի նիստին իր հաւանութիւնը տուած է խորհրդարանը, անհրաժեշտ նկատելով մահապատիժի հետ առնչուած կէտը փոփոխութեան ենթարկել, այլ խօսքով՝ մահապատիժը վերացնել: Միւս կողմէ, Կուրիցիական «Նիւ Յիւրի-խեր» թերթը գրած է, որ Երրորդ խորհուրդի խորհրդարանին նոր նախագահ ընտրուած է ատտորիացի Փեթր Շիթլեր, որ մէկ տարի իրաւունք ունի այդ պաշտօնը վարելու, երկու անգամ վերընտրուելու իրաւունքով:

ԹՈՒՆՈՒԶ

ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ԱՅԼԱԽՈՂ ՄԸ ՎԵՐՋ ԿՈՒ ՏԱՅ ՀԱՅԱԴՈՒԼԻՆ

ԹՈՒՆՈՒԶ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Թունուցի ընդհանրիկ այլախոհ Մոհամէտ Մոսաւ, որ բանտարկուած է, վերջ տուաւ մէկ շաբաթ առաջ սկսած հացադուլին, յայտնեց անոր ընտանիքը Երեքշաբթի օր: Սակայն անոր կիներ ըսաւ, որ իր երկու տղոց հետ պիտի շարունակէ հացա-

Շարք՝ էջ 10

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պէնզինը, մագնիսը, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ ցերեկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագրերու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կը մըք ստանալ հետեւեալ կերպովներէն.-

- ԱՅՏԵԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
- Հ ա մ զ գ ա յ ի ճ ի գրախանութ, Պուրճ Համուտ
- Գրատուն Caravelle, Չալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիլիաս

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ՔԱՐՏԸ ԿԸ ՍՏԱՆԱԸ ՉՐԻՕՐԵՆ

ՎՐԺԷՔՎՈՐ ՆՈՒԵՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇՆՈՐԾ ՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՉ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՍՊՈՒՆԸ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒՆ

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նոր նշանակուած դեսպան ձոն Օրտոնէյ 14 Յունուարին այցելութիւններ տուած է Արեւմտեան Միացեալ Նահանգներու ամերիկահայ կազմակերպութիւններուն: Ան տեսակցութիւն ունեցած է Արեւմտեան շրջանի Հայ Դատի Յանձնախումբին ներկայացուցիչներուն հետ: Արժարձուած են Հայկական Յեղասպանութեան, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու մէջ անոր ճանաչման առնչուող հարցեր: Ը. Օրտոնէյ համաձայն գտնուած է, որ Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ պէտք է որդեգրուի աւելի երկար տեւողութեան բազմակողմանի լուծում:

Ապա Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներուն ընկերակցութեամբ Ը. Օրտոնէյ այցելած է ՀՕՄԻ կեդրոնը, ուր ՀՕՄԻ Արեւմտեան շրջանի ատենապետ Սոնիա Փելթիքեան ներկայացնելէ ետք ՀՕՄԻ գործունէութիւնը, անոր նուիրած է ՀՕՄԻ յիշատակի ոսկերչում: Դեսպանը նաեւ այցելած է «Ասպարէզ» օրաթերթի, «Հոյսի» հեռուստեսիլի կայանի եւ «Արմինիոն» հեռուստեսիլի կեդրոնները, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ. Կյանտէլի մասնաճիւղին «Արարատ» կեդրոնը, ուր ծանօթացած է կատարած աշխատանքներուն:

Հայ Դատի Յանձնախումբի Արեւմտեան շրջանի գործադիր տնօրէն Ալեքս Սարգսյան այս այցելութիւններուն առիթով ըսած է. «Մեր համայնքին ամէնէն մեծ եւ ազդեցիկ կառույցներուն տուած այցելութիւնները առիթ ընծայեցին, որ պէսպան Ը. Օրտոնէյ լատպէս ծանօթանայ Հայկական Սփիւռքի այս աշխուժ գաղութին կենսաբան»:

ՓԱՐԻՉ ՎՃՈՒԾ Է ՄԱՍՆԱԿՑԻԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆ

Կ'ԸՍԷ ԺԱԲ ՇԻՐԱԲ

Հայաստանի նախագահին լրատուական ծառայութեան քաղերկր թեղեկութիւնները՝ «Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանին վերջերս յղած նամակի մը մէջ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք ըսած է, թէ 2002ը Հարաւային Կովկասի մէջ պիտի ըլլայ երկխոսութեան տարի մը, որ Փարիզի մէջ համաձայնուած սկզբունքներուն հիմամբ պիտի յանգնի Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ քաղաքական եւ վերջնական համաձայնութեան մը:

Փ. Շիրաքի նամակը նաեւ շեշտած է, թէ Փարիզ վճռած է մասնակցիլ Լեռնային Ղարաբաղի հարցին խաղաղ լուծման, ինչպէս նաեւ՝ շրջանին մէջ կայունութեան գործընթացին:

Փ. Շիրաք յայտնած է այն համոզումը, որ 2002ի ընթացքին հայեֆրանսական երկկողմանի յարաբերութիւնները պիտի ստանան նոր թափ: Ան գոհունակութիւն յայտնած է, որ նախագահ Ռ. Քոչարեանի եւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի Ֆրանսա այցելութիւնները կը նպաստեն այս յարաբերութիւններուն զարգացման: Ան յոյս յայտնած է, որ Հայաստանի մէջ Ֆրանսական համալսարանը աւելի եւս պիտի նպաստէ յարաբերութիւններուն սերտացման:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԿԸ ՆԿԱՏԷ ԴԵՏԵՐՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

15 Յունուարին Փարիզի մէջ կայացած եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի դէտերու յանձնախումբի նիստին, Հայաստանի զեկուցող Ի. Պելախոսեան ներկայացուցած է զեկուցում մը՝ Հայաստանի մէջ իրականացուած դիտարկման արդիւնքներուն մասին: Յանձնախումբի աշխատանքներուն Հայաստանէն մասնակցած է Եւրոպական խորհուրդի Հայկական պատուիրակութեան փոխ նախագահ Արմէն Ռուստամեան:

Ըստ Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մնայուն ժաննախումբի նախագահ եւ Եւրոպական խորհուրդի Հայկական պատուիրակութեան ղեկավար Յովհաննէս Յովհաննիսեանի, ներկայացուած զեկուցումը բաւական իրատեսական է. այնտեղ առարկայականօրէն ներկայացուած է Հայաստանի մէջ առկա վիճակը, սակայն նշուած են քանի մը մտահոգութիւններ, որոնք կը վերաբերին մասնապատիժի վերացման եւ պարտաւորութիւններու կատարման ժամկէտներուն:

Զեկուցումին մէջ նշուած է նաեւ, որ մինչեւ այլընտրանքային զինուորական ծառայութեան մասին օրէնքի ընդունումը, այդ հարցը ձեւով մը պէտք է լուծուի Հայաստանի մէջ: Այդտեղ կ'ըսուի նաեւ, որ Հայաստանի մէջ պարտաւորութիւններու կատարման գործընթացները ընթացքի մէջ են, սակայն միեւնոյն ժամանակ զեկուցողները մտաւարկութիւն արտայայտած են, որ ժամկէտներու առումով Հայաստան կրնայ չհասցնել օրէնսդրական թղթածրարի եւ համաձայնագրի ընդունումը:

2001Ի ԸՆԹԱՅՔԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ԱՃԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է

«Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ 2001ի ընթացքին նկատելի կերպով աճ արձանագրած է: Ըստ Լեռնային Ղարաբաղի պետական վիճակագրութիւններու բաժանմունքին, 1 Յունուար 2002ին Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը կը հաշւէ 144,300 հոգի՝ 2,800 հոգի աւելի 2001ի նոյն թուականի տուեալներէն: 1 Յունուար 2002ին Ստեփանակերտի մէջ կ'ապրէին 56,782 քնակիչներ:

2001ի ընթացքին Լեռնային Ղարաբաղի մէջ ծնած է 1,231 հոգի: Այս թիւը 18,7 առ հարիւրով աւելի է նախորդ տարուան թիւին: 2001ի ընթացքին Լեռնային Ղարաբաղ եկած են 2,452 հոգի, իսկ ինչ հաստատուած են 1596 հոգի: Այս տուեալները նոյնպէս աճ արձանագրած են նախորդ տարուան հետ բաղադրատաճ:

Յովհաննէս Յովհաննիսեան նշեց, որ համաձայն ընթացակարգին, Հայաստանին պիտի տրուի երեք ամիս պայմանաժամ՝ փաստաթուղթին հետ ծանօթանալու համար, եւ երեք ամիս ետք դէտերու յանձնախումբը նորէն պիտի անդրադառնայ փաստաթուղթին: Մարտին կը սպասուի նաեւ յանձնախումբի անդամներուն այցելութիւնը Հայաստան, Ազրպէյճան, ինչպէս նաեւ՝ Լեռնային Ղարաբաղ:

Յովհաննէս Յովհաննիսեան նկատեց, որ վերջին տարիներուն ընթացքին նման դիտարկում Լեռնային Ղարաբաղի մէջ չէ եղած, եւ այդ մէկը աշխարհին կարելիութիւն պիտի ընձեռէ ծանօթանալու Լեռնային Ղարաբաղի իրավիճակին: «Շատ կարեւոր է, որ Լեռնային Ղարաբաղի մէջ անոնք տեսնեն այն իրական դրական տեղաշարժերը եւ բարեփոխումները, որ մենք ունինք: Ես կարեւոր կը նկատեմ այդ այցելութիւնը. կարեւոր է, որ դիտարկման իրրեւ արդիւնք՝ Լեռնային Ղարաբաղը աշխարհին ներկայացուի այն տեսքով, որ կայ. տարու տարուան ընթացքին Ղարաբաղի մէջ ձեւաւորուած են ժողովրդավարական պետութեան բոլոր համապատասխան յատկանիշները: Ես կը կարծեմ, որ դիտարկումը բաւական լուրջ նշանակութիւն կ'ունենայ Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծման հարցին մէջ», ըսաւ Յովհաննէս Յովհաննիսեան:

Ըստ Յ. Յովհաննիսեանի, ինչպէս Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի դէտերու, այնպէս ալ քաղաքական եւ իրաւական յանձնախումբները բաւական լուրջ դրական տեղաշարժեր կ'արձանագրեն Հայաստանի մէջ:

Ինչ կը վերաբերի ստանձնուած պարտաւորութիւններու ուղարկման, ապա Յովհաննիսեան իրատեսական կը համարէ բոլոր պարտաւորութիւններուն կատարումը: «Պայմանաժամներու առումով պիտի ըլլան որոշ ուղարկումներ, բայց եթէ գործընթացը սկսած է, մենք կրնանք անոնց ներկայացնել, որ թեթեւիք խնդիրներ կան: Անոր վառ օրինակն է մարզու իրաւունքներու պաշտպանի մասին օրէնքի ընդունումը, որ մենք պարտաւորուած էինք ընդունել 6 ամսուան ընթացքին: Սակայն գործող սահմանադրութեան համաձայն, մարզու իրաւունքներու պաշտպանը պէտք է ընդհանուր Հայաստանի նախագահին հրամանագրերով, բան մը, որ կը հակասէ օրէնքի պահանջներուն: Այստեղ կը յառաջանայ սահմանադրական բարեփոխումներու խնդիրը եւ դէտերու յանձնախումբը ըմբռնումով մօտեցաւ այս խնդիրին», նշեց Յ. Յովհաննիսեան:

Յաջորդ կարեւոր պարտաւորութիւնը մահապատիժի վերացման խնդիրն է, «Քրէական օրէնսգրքը» եւ Մարդկային իրաւանց եւրոպական հռչակագիրը Հայաստանը պարտաւորուած էր ընդունելի անդամակցութեան հետ մէկ տարուան ընթացքին: Յ. Յովհաննիսեան յոյս յայտնեց, որ վերոյիշեալ փաստաթուղթերը քննարկուին Հայաստանի Ազգային ժողովի կարնանային նստաշրջանին ընթացքին:

Պ. ՅԻՒՍ ԿՈՂՄԷ, Յ. Յովհաննիսեան հաւանական նկատեց, որ գարնան Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի ներկայացուցիչը Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի հայկական պատուիրակութեան հետ (ոչ անդամի կարգավիճակով) մասնակցիլ Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նիստերուն: Ան նշեց, որ այս հարցը արժարձուած է վերջերս տեղի ունեցած Հայաստան - Լեռնային Ղարաբաղ խորհրդարանական յանձնախումբի նիստին:

Յ. Յովհաննիսեանի համաձայն, Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի ներկայացուցիչի ներկայութիւնը Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նիստերուն օգտակար պիտի ըլլայ այն առումով, որ խորհրդարանի անդամները տեղեկութիւն կ'ունենան նիստերուն քննարկուող խնդիրներուն մասին:

ՊՈԼԻՍ

ՏԻՐԱՆ ԻՆՃԻՃԻԻ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՄԱՆՐԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԻՍ

Պոլսոյ «Մարմարա» թերթը կը յայտնէ, որ 22 Դեկտեմբերին Պոլսոյ Միլիթարեան Մանուց Միութեան սրահին մէջ տեղի ունեցած է Հայաստանեայց եկեղեցիներու մանրակերտներու պատրաստութեան մասնագէտ Տիրան Ինճիճիի հին եւ նոր աշխատանքներու ցուցահանգէսին բացումը:



Տիրան Ինճիճի մեծ վարպետութեամբ Հայաստանեայց հին եւ նոր բոլոր եկեղեցիները մանրակերտ ձեւով վերարտադրած է իր պատրաստած նախանիւթով: Եկեղեցիներու մանրակերտման իրենց արտադրանքները կը իրենց ընկերական շահերուն մէջ, մանրամասն եւ ճշգրիտ գեղեցկութիւններով, իւրաքանչիւրութիւններով եւ ճարտարապետական կառուցումով: Եկեղեցիներու արտադրանքները մասնագէտներու կողմէ մանրակերտման, զարդարանքներով եւ յետին մանրամասնութիւններով: Յուցահանգէսին ներկայացուած են Ս. էլմիա-

